«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թ. ապրիլի 27-ի նիստի (էլեկտրոնային նամակագրությամբ)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 16

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՇՊՀ) հոգաբարձուների խորհրդի հիմնադրամի (այսուհետ՝ ՀԽ) նիստը կայացավ առցանց: Առցանց նիստին վերաբերող նյութերը 2023 թ, ապրիլի 21-ին ուղարկվել են հոգաբարձուների խորհրդի 20 (քսան) անդամներն.

1. Կարեն Թռչունյան –Կ.գ.դ., պրոֆեսոր,
2. Նազելի Բաղդասարյան – ՀՀ վարչապետի օգնական,
3. Արթուր Շատվորյան-ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ,
4. Արտուր Մովսիսյան-ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահի տեղակալ,
5. Արթուր Պապիկյան - Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ,
6. Լևոն Բարսեղյան - Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ,
7. Ջոն Կարապետյան-ՀՀ ԳԱԱ-ի «Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն,
8. Արմեն Թումասյան-«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի ավագ գիտաշխատող,
9. Բագրատ Ենգիբարյան - «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն:
10. Ալեքսան Տեր-Մինասյան – «Ֆյուր Արմենիեն» հիմնադրամի տնօրեն,
11. Լուսինե Գևորգյան-«ՇՊՀ» հիմնադրամի հասարակական գիտությունների ֆակուլտետի դոցենտ,
12. Վարդան Մանուկյան-«ՇՊՀ» հիմնադրամի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դոցենտ,
13. Աիդա Գարեգինյան-«ՇՊՀ» հիմնադրամի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դոցենտ,
14. Աշխեն Տոնոյան-«ՇՊՀ» հիմնադրամի հասարակական գիտությունների ֆակուլտետի դասախոս,
15. Անահիտ Վալեսյան-«ՇՊՀ» հիմնադրամի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դոցենտ,
16. Լիլիթ Ավետիսյան-«ՇՊՀ» հիմնադրամի հասարակական գիտությունների ֆակուլտետի ուսանող,
17. Մերի Դավթյան -«ՇՊՀ» հիմնադրամի հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանող,
18. Քրիստինե Առաքելյան- «ՇՊՀ» հիմնադրամի հասարակական գիտությունների ֆակուլտետի ուսանող,
19. Գևորգ Ղուկասյան-«ՇՊՀ» հիմնադրամի հասարակական գիտությունների ֆակուլտետի ուսանող,

20. Հովիկ Գալոյան- «ՇՊՀ» հիմնադրամի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ուսանող:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ.

1. «Գյումրու սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Խաչատրյանի դիմումը «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամին, ըստ սահմանված կարգի, Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փ. 28 հասցեի կաթսայատունը, մարզադահլիճը և մասնաշենքի 1-ին հարկում գտնվող 5 սենյակներն ու սանհանգույցը իրենց ժամանակավոր օգտագործման տրամադրելու խնդրանքով, ՇՊՀ-ի Հոգաբարձուների խորհրդում քննարկելու և հաստատելու հարցը:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ Լ.Բարսեղյանը էլեկտրոնային նամակով ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամներին ներկայացրել է ՇՊՀ ռեկտոր Ե.Սերոբյանի նամակը. «Գյումրու սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Խաչատրյանը դիմել է «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամին, ըստ սահմանված կարգի, Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փ. 28 հասցեի կաթսայատունը, մարզադահլիճը և մասնաշենքի 1-ին հարկում գտնվող 5 սենյակներն ու սանհանգույցը իրենց ժամանակավոր օգտագործման տրամադրելու խնդրանքով: ՇՊՀ ռեկտոր Ե.Սերոբյանը խնդրել է մինչև 2023թ.-ի ապրիլի 28-ը ՇՊՀ-ի Հոգաբարձուների խորհրդի նիստում քննարկել «Գյումրու սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ին վերոնշյալ շինությունները ևս մեկ տարով ժամանակավոր օգտագործման տրամադրելու հարցը:»:

ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահը հոգաբարձուներին ուղղված նամակին կից ուղարկել է «Գյումրու սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Խաչատրյանի՝ 17.04.2023 թվականի թիվ 1-33 գրության էլեկտրոնային տարբերակը:

«Հարգելի գործընկերներ, առաջնորդվելով մեր աշխատակարգով, այս նամակագրությամբ՝ էլեկտրոնային հաղորդակցությամբ առաջարկում եմ քվեարկել ժամանակավոր օգտագործման ժամկետը երկարացնելու որոշմանը՝ կողմ, դեմ, կամ ձեռնպահ: Մինչև ապրիլի 27-ը երեկոյան 17:00-ն սահմանում եմ քվեարկության վերջնաժամկետ: Եթե հարցեր ունեք, խնդրում եմ գրել այստեղ բոլորին մինչեւ ապրիլի 26-ը ժամը 17:00-ն: Ովքեր հարցեր չունեն, կարող են քվեարկել, երբ կամենան: Բոլորին խնդրում եմ քվեարկել այստեղ՝ այս նամակին պատասխանելով «պատասխանել բոլորին» ռեժիմով:»

Սահմանված ժամկետում՝ 2023 թ մինչև ապրիլի 27-ը երեկոյան ժամը 17-ը, ՇՊՀ Հոգաբարձուների խորհրդի անդամներից 17-ը մասնակցել է քվեարկությանը: ՀԽ 3 անդամ չի մասնակցել:

Էլեկտրոնային քվեարկության արդյունքներն են.

Կողմ՝ 17 (Ա.Գարեգինյան, Ա.Տոնոյան, Ա.Վալսեյան, Լ.Ավետիսյան, Վ.Մանուկյան, Հ.Գալոյան, Ա.Պապիկյան, Ք.Առաքելյան, Լ.Գեւորգյան, Լ.Բարսեղյան, Ա.Մովսիսյան, Ա.Թումասյան, Ա. Տեր-Մինասյան, Գ.Ղուկասյան, Մ.Դավթյան, Ջ.Կարապետյան, Բ.Ենգիբարյան)

Ձեռնպահ՝-0, Դեմ՝-0

Հիմք ընդունելով «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 20-րդ կետի 14-րդ ենթակետը և «Գյումրու սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Խաչատրյանի գրությունը՝ ՇՊՀ Հոգաբարձուների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Գյումրի քաղաքի Վ.Սարգսյան փ., 28 հասցեի կաթսայատունը, մարզադահլիճը և մասնաշենքի 1-ին հարկում գտնվող 5 սենյակներն ու սանհանգույցը մեկ տարով ժամանակավոր օգտագործման տրամադրել «Գյումրու սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ին:

ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Լ. Բաբսեղյան _____

ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի քարտուղար՝ Ա. Վալեսյան _____